թյան պատճառով. Իվանեն յուր անզգուշությամբ ընկավ թշնամու ձեռքը, Զաքարեն ստիպված եր յեղբոր ազա-

Պատկեր 2.

տության մասին մտածել, հաշտվելով սուլթանի հետ և Իվանեի դստեր Թամթային նորան կնության տալով*։

Վրաց որդի Մ/եծին Սարգսի առի զանա (—խաչի շուրջը) ռիկ ամրոցս զԱնբերդոյ յաղախնայ-ծին (s!) որդոցն Հաքարու որ (ճակատը կարկատած) ... յ ի սմա/ի կորուստ քրիստոնեից և յաւեր եկեղեց (s!) և ետու առնել զնշ.

ՈՒԹ թվականը Անբերդի առման թվականը չէ, այլ խաչի կանգման։ Ուրիշ արձանագրություններից յերևում է, վոր ԺԳ. դարու առաջին քառորդում (արձանագրություններից մեկը գրված է 1221 թ.) Ինաքլու գյուղում վանք ու միաբանություն է յեղել. ուխտի առաջնորդն եր Հայրապետ վարդապետ։ Համ. Արարատ 1893. 769։

* Գանձակեցի, 156. Մահմեդական և Ասորի տարեգիրներ Աբուլ-Ֆարաջ և Իբն ալ Աթիր, ինչպես և Աբուլ-Ֆեդա Խլաթի պաշարումը նշանակում են 1210 թ. Էյուբեան Մալեկ էլ Նեմջեդդինի որով (1207—1210), ըստ Գանձակեցու Կուզ կոչված։ Աբուլ-Ֆեդան հաղորդումն այնպիսի մանրամասնություններ պայմանների վերաբերությամբ, վորոնց մասին մեր պատմիչները լռում են. «Նրանց (Վրաց) թագավոր Իվանեն, տաքացած զինով՝ անխոհեմաբար հրապարակի պարիսպների տակ քսան ձիավորով զբոսնելու ժամանակ, մահմեդականները դուրս յեկան, ձիուց վայր գլորեցին և ձերբակալեցին։ Նա ազատություն ձեռք Խլաթի անհաջողությունը յետ չկասեցրեց Զաքարյաններին իրենց նվաճողական ձեռնարկություններից. Կարինը և այլ հեռավոր յերկիրներ, ինչպես Ցերզնկան, հարկատու արին Վրաց թագուհուն (Հավել. Բ.2)*։ Նրանց նվաճումների մասին տեղեկություններ ունինք նաև արձանագրությունների մեջ. հենց Իվանեն ինքը յերկիցս՝ Գեղարդի և Հաղարծնի արձանագրությունների մեջ թվում է նվաճված գավառներն իրենց տիրապետության սահմաններով**։ Հայ իշխաններից նրանց ոգնականներն եյին հատկապես իրենց ազգական Զաքարե և Սարգիս՝ Վահրամի վորդիքը, և ապա Զաքարեի վորդին Վահրամ Գագել, վորոնք և ավագ Զաքարյանների հովանավորությամբ բազմաթիվ բերդեր նվաճեցին Գարդմանի, Փառիսոսի և Բուստի գավառներում և մի բավական ընդարձակ իշխանություն հիմնեցին ներկա Շամշադինի և մասամբ Գանձակի գավառների շրջաններում***։

Զաքարիայի վերջին և մեծ արշավանքն ուղղված եր Պարսկաստանի դեմ. Հայաստանն արդեն մաքրված

բերեց, խոստանալով վերադարձնել բազմաթիվ ամրոցներ և 5000 մահմեդական գերի, վճարել 10,000 վոսկեղրամ, զինադադար անել 30 տարի և յուր Թամթա դուստրը կնության տալ Ավաղին։ Այդ պայմաններն ընդունվեցան յերկուստեք յերդմամբ, և Վրացին (Իվանեյին և այդպես կոչում) յետ ուղարկվեցավ՝ յուր խոստումները կատարելուց հետո». (Brosset Additions. p. 273/4։ Համ. Տոմաշեկ. Պատմական Տեղեկություններ Սասնոյ վրա. Հանդ. Ամսորյա 1896. 261)։

Թամթայի կնությունը Աւաղ Նէմջեդինի և ապա Աշրաֆի հետ ունեցավ և յուր բարի հետևանքները՝ մեղմացան Խլաթի սուլթանների հարաբերությունները իրենց հպատակ Հայերի հետ և դարձան Հայոց ուՎրաց դաշնակիցներ։ Նույն իսկ թաթարների արշավանքի ժամանակ Թամթան տեր դարձավ Խլաթի Սուլթանության, գերությունից ազատվելուց հետո (Գանձ. 157, 215, 276/7)։

* Գանձ. 154. Brosset. Hist. 466. Մշու Առաքելոց վանքի Տոնականի յիշատակարանը տալիս է մեզ բավական մանրամասնություններ Զաքարեյի դեպի Կարին կատարած արշավանքի մասին. «Եւ ի կատարման գրոցս (1204/5 թ.) սուլտանն Սեւաստիոյ ժողով արարեալ անհուն բազմութեամբ, նմանեալ անբարշտին Ցուլխանեա, փքացեալ լեռնացեալ եհաս ի Թէոդուպաւղիս, եւ անտի կամեցեալ անցանել յաշխարհս հայոց եւ վրաց եւ ամէնեին մոռացաւ զած. եւ յուսացաւ ի նանրութիւն իւր, կամէր յաւարի առնուլ զաշխարհս ամենայն։ Իսկ աւգնականութեամբն այ. եկին հասին զաւրքն վրաց, եւ մեծն Զաքարիէ (ի վերան գրած) հանդերձ Իւանեի հարազատաւն իւր, եւ այլ ածասէր իշխանաւք եւ նախարարաւք, եւ յոգնախումբ խառնի ճաղանջ բազմութեամբ հասին ի վերայ անաւրէն զաւրացն տաճկաց, եւ յանխնա կոտորեցին զնոսա, զոմանս ձերբակալ արարին եւ ոմանք ի փախուստ դարձան. բայց սուլտանն անվրէպ մնաց. սակայն զաւարոյն զթիւս ո՞ կարէ զիտել զոսկւոյ եւ զարծաթոյ եւ զմետաքսի, զերամակս ուղտուց, ձիոց եւ ջորւոց» (Ցերևանի թանգ.)։

** Ստեփ. վարդ. Մխիթարյան. Ստորագր. Այրի Վանաց սրբոյն Գեղարդայ. Վաղարշապ. 1873. յեր. 16. սխալաշատ ընթերցվածներով. համ. մեր ընթերցվածը. Հավ. Ա. 1։ Ջալ. Ա. 131. Բարխուդարյան. Արցախ. 366։

*** Գանձակեցի 154/5։